Զամախին էլ ուրիշ քաղաքների նման՝ ունի իրեն տեղական տանու բժիշկները և դեղ ու ճարը, թէ և իրրեւ քաղաք՝ ունի և քաղաքական բժիշկը։

Զամախու տանու բժիշկները գիտեն, որ գլխացաւի ճարն է նշագիրը բովել, սխկել և քիթը քաշել թութունի նման. թթու խիարը կիսած՝ ճակատին կապել և քացախ քսել ճակատին. նոյնպէս շլորի կամ հոնի պաստիլ կապել ճակատին։ Գիտեն, որ աչքացաւի դեղն է Մսրի (Եգիպտոսի) իսկական նարթը մարգարտի հետ սխկել, փոշիացնել և հետը սխկելով խառնել լակլակի (արագլի) ձուի կճեպը և դեղդրով քաշել աչքը։ Գիտեն, որ մաղադինոսը (կարոս—քէրէվիզ) խաշել, ջուրը խըմացնել շեւկապ մարդոյն, օգուտ է։ Գիտեն, որ կաղամբի (քալամ լահանա) աղաթթու դրածի ջուրը ջրգողի դեղ է. գիտեն, որ ֆրէնկ իւզումին (հաղարճն), որ մի թթուաշ պտուղ է, տերեւը ջրվէթ բացող է և երիկամունքների (պլօճիկները) և ջրվէթի ճանապարհի մէջ եղած վէրքերը կը լաւացնի. գիտեն, որ կնկայ, կովի, ոչխարի և այծի կաթը դեղ է ջրվէթի խողովակի (ճանապարհ) մէջ գտնուած ցաւի, մանաւանդ քարեղէն տկարութեան։ Գիտեն, որ փորացաւի դեղն է աւելուկը խաշել և փորի վրայ դնել տաք տաք։ Գիտեն, որ կատաղած շան կըծածի դեղն է Ալաքլունկ անունով բոյսը (Զիթուկ— գեռուն), որ վիզը բարակ, գլուխը փոքր և պոզերաւոր, իսկ փորը մինչեւ պոչը հաստ ու բոլորակ մի բլոջ է սեւ ու սպիտակ գոյնով, որ լինում է դարունքը ցորենի արտերի և ուրիշ կանաչների մէջ, որը ձէթ ունելոյ համար՝ տեղ տեղ ձիթարդոջ են ասում, որին բռնելուս՝ ձեռք պէտք է չտալ, որ փորի ձէթը չթափի. այլ բարակ թէլով պէտք է վզիցը կապել և կախ տալ մինչեւ 40 օր. և 40 օրից յետոյ՝ երբ սատկում է բլոջը և չորանում, վերցընում են լաւ սխկում ու փոշիացնում։

Այս սպիտակ փոշուց մի մսխալ տղամարդի համար, կէս մսխալ երեխայի համար և մէկ ու կէս մսխալ անասնոց համար լցնել մի ֆինջան (ռումկայ) ջրի, կամ աւելի լաւ՝ կաթի մէջ և խմացնել շան կծածին, բայց 40 օր անցած չլինի շան կծելուց։ Երբ հիւանդը այս դեղը խմի, փորը ցաւ կը բռնի, և յա-